ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի 12 ամիսների ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ

2025 թվականի 12 ամիսների ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի կողմից իրականացրել են հետևյալ աշխատանքները.

- Վերանայվել և թարմացվել են ՀՀ Վայոց ձորի մարզի քաղաքացիական պաշտպանության մարզային և համայնքային ծառայությունների, զորահավաքային պլանները և հատուկ ժամանակաշրջանին վերավերվող փաստաթղթերը:
- Ճշգրտվել են ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմում աշխատող զինապարտների գրանցամատյանները և պահեստազորայինների ցուցակները:
- Իրավական և մասնագիտական հսկողության շրջանակներում ուսումնասիրվել են Արենիի և Եղեգիսի համայնքապետարանների գործունեությունը պաշտպանության, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում: Ուսումնասիրությունների ընթացքում համայնքապետարանների զորահավաքային նախապատրաստության գծով պատասխանատուների հետ տարվել են համապատասխան մեթոդական աշխատանքներ և ձեռնարկվել են գործուն միջոցներ ուսումնասիրված բնագավառում աշխատանքները բարելավելու, առավել արդյունավետ ու նպատակային դարձնելու ուղղությամբ:
- Ղեկավարվելով ՀՀ պաշտպանության մասին օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումներով, 2025թ. ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների հետ պարբերաբար անց են կացվել առանձնացված շտաբային ուսումնավարժանքներ:

- Հաշվետու ժամանակաշրջանում նախատեսվել և ՀՀ ՆԳՆ ՓԾ ՎՁՄ փրկարարական վարչության ներգրավմամբ ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի և համայնքապետարանների ներկայացուցիչների հետ անց է կացվել ուսումնական պարապմունք՝ «ՀՀ Վայոց ձորի մարզում հնարավոր բնական և տեխնածին աղետների տեսակները, դրանց ազդեցությունը մարդկանց, շրջակա միջավայրի և կենսական նշանակության ենթակառուցվածքների վրա», «Բնական և տեխնածին աղետների կանխանգելման, հակազդման գործողությունների կազմակերպման և հետևանքների վերացման հիմարար մոտեցումները, մեթոդներն ու գործիքակազմը» թեմաներով:
- Պլանավորվել և ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի աշխատողների հետ անց է կացվել ուսումնական պարապմունք՝ « ԱԻ և ՔՊ ժամանակ պետական կառավարման և տեղական իրքնակառավարման մարմինների ծառայողների համար անհատական անվտանգության պայուսակների կարևորությունը և անհրաժեշտությունը» թեմայով: Մշակվել և աշխատակիցներին են տրամադրվել համապատասխան ուղեցույցներ՝ նշված պայուսակները բազային պարագաներով համալրելու վերաբերյալ:

  Ձեռնարկված միջոցառումների արդյունքում մարզպետի աշխատակազմի աշխատողների կողմից ձեռք են բերվել անհատական անվտանգության պայուսակներ, որոնք համալրվել են համապատասխան պարագաներով:
- Հաշվետու ժամանակաշրջանում ուշադրության կենտրոնում է պահվել առաջին բուժօգնության վերաբերյալ հանրային ծառայողների իրազեկվածության և պատրաստվածության մակարդակի բարձրացմանն առնչվող հարցերը: Պլանավորվել և համապատասխան մասնագետի ներգրավմամբ ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի աշխատողների հետ պարբերաբար անց են կացվել ուսումնական պարապմունքներ՝ «ԱԻ և ՔՊ ժամանակ կանխատեսվող բարդ իրավիճակներում առաջին բուժօգնության հիմունքները, հիմնական սկզբունքները» թեմաներով:
- Կրակային պատրաստության շրջանակներում ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի աշխատակիցներին տեսական և գործնական գիտելիքներ

հաղորդելու նպատակով անց են կացվել կրակային պատրաստության պարապմունքներ:

- ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի կողմից պարտադիր զինվորական ծառայության 2024թ. ձմեռային և 2025թ. ամառային զորակոչերի, ինչպես նաև վարժական հավաքների ընթացքում անհրաժեշտ աջակցություն է ցուցաբերվել ՀՀ ՊՆ ՀԶԿ Վայոց ձորի մարզի զինկոմիսարիատին և համայնքապետարաններին:
- 2025թ ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի կողմից որոշակի աշխատանքներ են իրականացվել նաև գաղտնիության ռեժիմի ապահովման ուղղությամբ:

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի
զորահավաքային նախապատրաստության
բաժնի պետ՝ Ս. Միրզոյան

05.01.2026թ